ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

13.02.2023Թ. ԿՆՔՎԱԾ N «ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2023/1-3» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան «08» 06 2023թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լուսինե Ղազարյան» ԱՁ-ն, ի դեմս Լ. Ղազարյանի, որը գործում է որպես անհատ ձեռնարկատեր (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 13.02.2023թ. կնքված N «ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2023/1-3» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5-րդ կետը, պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի 05.06.2023թ. թիվ 2407-21 զեկուցագիրը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 13.02.2023թ. կնքված N «ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2023/1-3» գնման պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող՝ ծառայությունների մատուցման ժամանակացույցի թիվ 13 չափաբաժնով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «2023 թվականի հունիսի 15-30»:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»	«ԿԱՏԱՐՈՂ»
Չարենցավանի համայնքապետարան	**«Լուսինե Ղազարյան» ԱՁ**
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան	**ք. Երևան Արցախի 4 նրբանցք 10/1**
հրապարակ թիվ 1	**շենք 113 բնակարան**
ՀՀ ՖՆ ԳՎ	**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900132130049	**Հ/Հ 1570075367070100**
ՀՎՀՀ 03022497	**ՀՎՀՀ 87898963**
	էլ. հասցեն arm.production@mail.ru
	հեռ. (+37455) 33-33-11
Համայնքի ղեկավար՝	**Լ. Ղազարյան**
Հ. Կ. Շահգալդյան	
(ստորագրությունը)	**(ստորագրությունը)**
Կ.Տ	**Կ.Տ**